

ԼՈՒՐԵՐ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Անցնող վեց շաբաթներու ընթացքին այս խորհուրդը ունեցաւ արդիւնաւոր գործունեութիւններ: Խորհուրդի հրաւերով իւրաքանչիւր Ծուխի Կիրակնօրեայ Վարժարանէն մէկական ուսուցիչներ որպէս ներկայացուցիչ մասնակցեցան «Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի Առաքելութիւն» ծրագրին, որուն արդիւնքը հետեւեալներն են.-

Նոր նշանակուած Խորհուրդի անդամներն են.-

Վահէ Սարգիսեան՝ Կիրակնօրեայ Վարժարանի Առաջնորդարանի Բաժանմունքէն՝ Թղթակցութեանց Քարտուղար:

Արժ. Տ. Յարութիւն Քինյ. Թաշճեան՝ Հոգեւոր Հովիւ Վենթուրա Գաւառի Հայց. Եկեղեցւոյ:

Երէցկին Թալին Փեթոյեան՝ Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցիէն, Ատենադպրուհի:

Գերըն Մենըր՝ Օգլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցիէն, Խորհրդական:

Իգի Թումանեան՝ Գոսթա Մեսայի Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցիէն, Խորհրդական:

Բոշ. Վարդան Սրկ. Զարգարեան՝ Քահանայութեան Թեկնածու, ուսանող, Խորհրդական:

Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի պաշտօնակալ անդամներ.-

Տէպի Տէրտրեան՝ Սան Տիէկոյի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցիէն, Ատենապետուհի:

Զարուհի Տէր Մկրտիչեան՝ Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցիէն, Գանձապահ:

Մարկրիթ Դուկասեան՝ Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցիէն, Խորհրդական:

Այտա Քէշմէշեան՝ Վենթուրա Գաւառի Հայց. Եկեղեցիէն, Խորհրդական:

Աղաւնի Աշըքեան՝ Լա Գանիատայի եւ Քրէստնթա Հովիտի Հայց. Եկեղեցիէն, Խորհրդական:

Աշխատանիստեր եւ Գործունեութիւններ.-

Մեծ Պահոց ընթացքին Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի աշխատանիստերուն խորագիրն է «Շնորհքով Շաղախուած», որ պիտի ներկայացուի Թեմիս հետեւեալ չորս շրջաններուն մէջ:

Փետրուար 27ին Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցի, Սան Տիէկո:

Մարտ 6ին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցի, Փասատինա:

Մարտ 13ին Հիւսիսային Գալիֆորնիա (Եկեղեցին պիտի որոշուի):

Մարտ 20ին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցի, Ֆաուլըր:

«Շնորհքով Շաղախուած» աշխատանիստը բոլոր սերունդներու համար նշանակութիւն ունի, որ կենսական կապ մը կը ստեղծէ Սրբազան Աւանդութիւններու, Սուրբ Գիրքի եւ Հայ ժողովուրդի մշակութային աւանդութիւններուն մէջ, որ մեզ իւրայատուկ կը դարձնէ: Այս աշխատանիստերը բոլոր տարիքի փոքրիկներու համար սքանչելի ծրագիրներ են: